



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հավերժության մեջ լինում են պահեր, ակնթարթներ, որոնք արտաքնապես թեև ոչնչով չեն զանազանվում ուրիշ ակնթարթներից, սակայն մարդկանց կողմից ընձայված ուշադրությունը, հիրավի՛, անկյունադարձային մշանակություն է հաղորդում դրանց:

Ահա, մշանակալի այդպիսի ակնթարթ է հին ու մոր տարիների գրկախառնման այն խորհրդավոր վայրկյանը, որի հետ տիեզերքի սիրտը կրկին մի անգամ տրոփելով՝ ազդարարում է. «Գնացեալ մեկնեցաւ տարին այս եւս»:

Այո՛, պատմության գիրկն անցավ մաւ 1995 թվականը, որի և 1996 թվականի եզրագծին կանգնած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական ու տեսչական կազմը հավաքվել էր Մայրավանքի սեղանատանը, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մախազահությամբ պետք է կայանար Ամանորյա ավանդական հանդիսությունը: Ուրախությամբ ու հրճվածքով էր համակված բոլոր հավաքվածների սրտերը, և մրանք անհամբերությամբ սպասում էին Հովվապետի ժամանմանը, մի բան, որը ինչպես ուրախալի, այնպես էլ խորհրդանշական իմաստ ուներ իր մեջ: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի անդրամիկ Տարեմուտի հանդիսությունն էր լինելու այդ երեկը. սեղանատան կամարների մերքո հնչած ծափոջույնների մերքո սրահ մտավ Վեհափառ Հայրապետը, և Տերունական աղոթքի ընդհանրական արտասանումով տարեմուտի հանդիսությունը բացված համարվեց:

Տիրավանդ աղոթքից հետո, հոգևոր ճեմարանի սանճերից կազմված երգչախումբը, պարոն Ռ. Ծարբաթյանի ղեկավարությամբ, կատարեց Հայաստանի Հանրապետության և հոգևոր ճեմարանի հիմները, որոնց հաջորդեց հոգևոր ճեմարանի տեսչության խոսքը, որն ընթերցեց ճեմարանի վերակացու Տ. Կարապետ արքեպ. Հարությունյանը.

«Վեհափառ Տեղ,

Գերազնորն սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի սաներ և ներկաներ,

Եվս մի քանի ժամ, և արդեն անցած կլինի 1995 թվականը: Այնպիսի մի տարի, որն ընդգրկում էր պատմական խոշոր իրադարձություններով, նոր բազմակի առիթներով և իմաստներով:

Այս տարին նշանակալից դարձավ հոգևոր ճեմարանի կյանքում: Ծեմարանի տեսչական ղեկավարությունը ստանձնեց Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի փոխառաջնորդ Հայկազուն Ծայրագույն վարդապետ Նաջարյանը, որը, թողնելով ամերիկյան բարեկեցիկ պայմանները, հակառակ արտագաղթող հայազգի հասարակության, ներգաղթեց Հայաստան և լծվեց սրբազան գործին: Նա համալրեց հոգևոր ճեմարանի շարքերը շնորհալի տղաներով, տաղմդաշատ և մասնագետ դասախոսներով, որոնց պակասը հատկապես կրոնական առարկաների համար այսօր էլ զգացվում է:

Ձեր օգնությամբ ճեմարան ներմուծվեց համակարգիչներ: Մի խոսքով՝ ճեմարանը ստացավ նոր լիցք և առաջնորդվում է նորովի հունով:

Այս բոլորն անշուշտ կապված են ամենաէականի հետ: Այն է՝ Ձերդ Սրբության, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, վերընտրության իրողությունը, որը թերևս պատմական շոշափելի իրադարձությունն էր 1995 թվականի:

Անցած տարի Մայր Աթոռը, Հայ Եկեղեցին Ամանորը շնորհավորեցին առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Այսօր հավաքվել ենք Ձերդ Հայրապետության հովանու ներքո:

Սակայն բոլորիս պարզ է, որ Ս. Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսական խորհրդանիշը մնում է անփոփոխ: Իսկ այն անհատներն ու անհատականությունները, որ ընտրվում են Ամենայն Հայոց Քահանայապետ, կարող են կերտել համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն հասանելիք բաժինը, քանզի պատմությունը չեն ստեղծում այն ժողովուրդներն ու հերոսները, որոնք կանգնած են անշարժության մեջ: Պատմությունն արարում են անհագիստ այն նժոշահներն, որոնք հավերժ փնտրում են հայրենիք, ձգտում լավագույնին, Ավետյաց երկրին: Այստեղ թերևս պատշաճ էմ համարում Ձերդ Սրբության հեղինակած մի գրքի վերնագիրը ձևափոխելով հարմարեցնել իմ խոսքին. «Նրանք՝ անժամանակներ են ժամանակի մեջ»: Այս իմաստով, ըստ իս, գուգահեռվում են հոգևոր ճեմարանի տեսչի՝ Հայր Հայկագունի և Ձերդ Վեհափառության կերպարները: Վստահ ենք, որ հավատքը, լավագույնի և գեղեցիկի հանդեպ, մղում է Ձեզ ստեղծագործական որոնման հոգևոր ոգևորության:

Այսօր շատերին է հայտնի Ձերդ Սրբության բեղմնավոր գրիչը: Շատերը հիացած են Ձեր հռետորական խոսքով: Սակայն մեզ, ի մասնավորի հոգևոր ճեմարանի տեսչական կազմին և ուսանողությանը, հավելյալ այդ արժեքներին, ոգևորությամբ ու երախտապարտությամբ է լցնում Ձերդ Սրբության մվիրական կամեցողությունը ճեմարանի հանդեպ: Ցանկալի մի արժեք, որ ապագայում պիտի վերարժևորվի ճեմարանականների առողջ պտուղներով: Իսկ որոնք են այդ պտուղներ, եթե ոչ հավատքն ու սերը, անկոտրում և անմահանջ կամքն առ կյանք և գիտություն, դեպի ճշմարտություն և իմաստություն, որոնք, հավատում են պիտի ազմվացնեն և սրբագործեն մեր Եկեղեցին, մեր հոգևորականությանը Հիսուսի և սրբերի առջև: Եվ, ի վերջո, դրանք ոչ միայն բարոյական պտուղներ են մարդկային առումով, այլև բարձրարժեք անժամանակի մեջ և հաճո՝ Բարձրյալն Աստուծո, քանզի դրանք հոգու պտուղներ են, իսկ հոգին ապրում է անեզրության և անժամանակի մեջ: Ակամա մտաբերում են, որ միգուցե այս գիտակցությունն էր պատճառներից մեկը, երբ Հիսուս խոսքն ուղղեց հրեաներին՝ ասելով. «Եթե դուք կացջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք

իմ էք և ծանիջիք զճշմարտությունն և ճշմարտությունն ազատեսցե՛ զձեզ»։ Արդ, Քրիստոսի ճշմարտությունը պիտի ազատի մահ մեզ։ Իսկ մեր ուսանողները պիտի ներառեն այդ արժեքները, որպեսզի դառնան մեծ լուսատուներ՝ երջանկության աղբյուր ունենալով իրենց լուսատվությունը։

Մեծերից մեկն ասել է. «Մտածել, նշանակում է խոսել այնպիսի բաների շուրջ, որոնք պատասխան չունեն»։ Իսկ ամեն գալիք տարվա շեմին ինքնաբերաբար սկսում ենք խորհել հավերժական և անպատասխան հարցերի շուրջ, անդրադառնում մեր անցյալին և կարծես հաշվետվության պահեր ապրում։

Հետևաբար, Ամանորի այս խորհրդավոր երեկոյին թույլ տվեք կարճել իմ խոսքը, և, որպես Ձեր հոգևոր զավակ, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության և դասախոսական կազմի, հանուն ճեմարանական զինվորյալ բանակի, շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին՝ ի սրտե ցանկանալով արևշատ և երջանիկ ստեղծագործ տարիներ՝ լեցուն ապրելու առողջ տենչով։

Մեր շնորհավորանքներն ենք հղում մահ մեր միաբանակից եղբայրներին և Մայր Աթոռի աշխարհական ծառայողներին։

Ծնորհավոր Գալիք տարին»։

Այնուհետև Ա լսարանի սան Հովհաննես Ամիրյանն արտասանեց մի հատված Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ից, իսկ երգչախումբը կատարեց Կոմիտասյան հանճարի հրով թրծված «Զանճառելի լուսոյ մայր...» գեղեցկահյուս շարականը։ Դեռևս մի քանի ժամ էր բաժանում ներկաներին գալիք ու անհայտ 1996 թվականից, սակայն Գ լսարանցի Սամվել Թորոսյանի հեղինակած և արտասանած «Լոկ մեկ ակնթարթ» քանաստեղծության շնորհիվ բոլորը ապրեցին այդ ակնթարթի հուզումը։ Հուզումն առավել խորացավ, երբ երգչախմբի կողմից կատարվեց «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» Ծննդյան զմայլիչ մեղեդին։ Որից հետո Վեհափառ Հայրապետին և ներկաներին շնորհավորանքի խոսք ասաց Տ. Անուշավան արքեպ ժամկոչյանը։

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր, սիրելի միաբանակից եղբայրներ
և շատ սիրելի հոգևոր ճեմարանի սաներ,

Ահա 1996 թվականի ոտնաձայնից նահանջում է 1995 թվականը՝ պատմության ոսկեդեմ էջերը լցնելով անցնող տարվա իրադարձություններով:

Ամեն անգամ, երբ քացվում են մեր տարվա դռները, մեր հուսատեճ հոգիները սպասում են, որ հեռավոր եկեղից լավի հրեշտակների երգը՝ « Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն »:

Ամեն անգամ, կանգնած մեր տարվա շեմին, բոլորս լցվում ենք մեր ապրումներով և զգացումներով, այս պահիս մեզ ենթարկելով ինքնաքննումի և դեպի գալիք տարին լցվելով ինքնակերտումի ոգով:

Նայում ենք մերթ թախիծով, մերթ խիմոյով անցնող տարվա վրա, որն իր հետ հավերժի գիրկը տարավ շատերի ցավերն ու իղձերը, ինչպես և ուրախությունն ու երջանկությունը:

Վստահ ենք, որ Ամենայն Հայոց մեր սիրելի Հայրապետի օրով, որ իր կյանքում լինելով առաջին անգամ է, որ Ամանորը դիմավորում է Մայր Հայրենիքում, Հայաստանյայց Եկեղեցին կապրի հոգևոր զարթոնքի մի մոր շրջան, որ ավելի քան երբեք հայ երկնակամարի վրա և հայ մարդու հոգում պետք է շողա ինչպես Լուսավորչի անմար կաթել:

Ամեն անգամ, երբ հրաժեշտ ենք տալիս անցնող տարուն, ողջունելով մորը, հմերը հավատացել են, որ եկրագունդը իր հավիտեճական պտույտի մեջ մի պահ կանգ է առնում մեր տարվա կեսգիշերին, և մարդիկ մի պահ հայացք են գցում անցնող տարվա ուղու վրա:

Հուզիչ է կանգնել մեր տարվա շեմին, վճռական որոշումով՝ թոթափելու մեր տկարությունները, հոգեպես վերամորոգվելու և ձգտելու կատարելության: Ապրել մեր ժամանակը որպես բարոյական մարդ՝ վերածնված Սուրբ Հոգու գործությամբ և ներգործությամբ, և ուխտել՝ նպատակ և իմաստ տալ մեր կյանքին մեր բարի և շինարար գործերով, մեր սիրո գործերով: Ահա մեր սրբազան պարտականությունն այս մեր տարվա լուսաբացին: Վաղը արշալույսը մեր ձևով պետք է

քացվի, արևը մոր ջերմությամբ պիտի ջերմացնի մեր հոգիներն ու Մայր տաճարի ծեր քարերը, ուր կանթեղված է հայկազյան ոգին, որ հաճախ բոցավառվում է հույսի ու հաղթության լուսե շողերով: Այդ կանթեղը համայն հայությանը միասնության է կոչում՝ դիմակալելու ամեն տեսակ փորձության: Իզուր չէ ասված այն խոսքը, թե մենք ազգից դուրս չենք, ազգը մեր Եկեղեցու մեջ է:

Վեհափառ Տեր, այժմ, իբրև մեր վանքի ամենակրտսեր հոգևորական, թույլ տվե՛ք շնորհավորելու ձեր Նոր տարին՝ ցանկանալով Ձեզ երկար-երկար տարիների գրական կյանք, և իբրև Բարոնապետ առաջնորդե՛ք մեզ այս կյանքի արեկոծ ծովից դեպի անդորր և խաղաղություն: Թող Աստված անսասան և միշտ ծաղկյալ պահի մեր Սուրբ Եկեղեցին՝ իր հավատավոր ժողովրդով և հոգևոր ծառայողներով, ամեն»:

Հայր սուրբի խոսքից հետո, Ա և Դ լսարանի սանձներ Նարեկ Տիրացվյանը և Արտակ Ալեքսանյանն արտասանեցին Միքայել Նալբանդյանի «Ազատություն» և Մուշեղ Իշխանի «Երկիր հմամյա» բանաստեղծությունները, իսկ Զ լսարանի խորեն Ստեփանյանը ֆլելյտայով մվագեց Բախի «Սկերցո»-ն: Այնուհետև երգչախմբի կատարմամբ հնչած Ծերամի «Անդրանիկին» երգի հաղթական ելևէջներին հաջորդեց հանուն ուսանողության շնորհավորական խոսքը, որն ընթերցեց Զ լսարանի սան Սամվել Խաչատրյանը:

«Մարդկային կյանքի անցողականությունն և հավերժականության մեջ իրեն տեղն ունենալու արարածական բոլոր փափազը մարդուն հարկադրել են հղանալ ժամանակի գաղափարը, որի արարումով նա իրեն առավել ապահով է զգացել մոռացության մատնվելու և մշուշի մեջ թաղվելու վտանգի առջև:

Թեև ամեն երկրային իրականություն դատապարտված է ոչնչացման, և թեև «Մարդոյ իբրև խոտոյ են աւուրք», սակայն կան բաներ, որոնց առջև մոլորիսկ գլուխ է խոնարհում ամենազոր ժամանակը:

Արդ, այսօր, ամանորյա տոնի այս խորհրդավոր նախաշեմին, «մեք ամենքեան» եղբարք ի միասին» եկել ենք գնահատելու հրաժեշտ տվող տարում ապրած մեր կյանքը և տեսնելու, թե արդյոք 1995 թվականն արձանագրե՞լ է այնպիսի իրողություններ, որոնց նկատմամբ ժամանակի ծառացումը մույնիսկ անիմաստ լինի:

Ծանր, խանդավառ հույսերով ու դառն հիասթափություններով լի էր 1995 թվականը, սակայն թանձր մշտուշից ծագած Արցախյան խաղաղության լույսը մոռացության մատնեց մեր կրած դառնությունները: Այդ դառնությունները առավել ևս ամոքվեցին այն բանով, որ անցնող տարում մեզ շնորհվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի դառնալի կորուստից հետո, հրաժեշտ տվող այս տարում, վերջապես, վերացավ սգո շղարշը հայրապետական գահից, և այնտեղ արժանավորապես բազմեց ազգընտիր ու մորընտիր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը:

Վեհափառ Տեր, պատե՛ն առիթից օգտվելով, հանում ճեմարանի ուսանողության, շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և խորին երախտագիտության հայացք հառում Բարձրյալն Աստծուն, որ հատկապես ճեմարանյան մեր այս սերնդին արժանացրեց՝ Մայր Աթոռում Ձեր դիմավորած առաջին Նոր տարուն ներկա գտնվել:

Մեր խորին երախտագիտությունը Ձեզ, որ անձանձիր ուշադրությամբ հետևեցիք ճեմարանյան կյանքի անցնող տարվա իրադարձություններին և Ձեր հոգեխնամ տքնությամբ, հետևողականորեն իրականացրիք Տերունական այն պատգամը, թե՛ «ես զիմսն ճանաչեմ և ճանաչիմ յիմոցն»:

Արդ՝ մենք ամենայն պատասխանատվությամբ հավատիացնում ենք Ձեզ, որ զուր չեն անցնի Ձեր բազմարդյուն ջանքերը:

Խոստանում ենք, որ հպարտորեն կկրենք մեր խաչը, կկրենք այն առանց դժկամության, զի ինչպես որ Դուք, սիրելի Վեհափառ, շատ եք սիրում կրկնել՝ ով որ խաչ կրել գիտի, մա է հաղթանակում:

Հաղթանակ...

Հաղթական այս ոգին եմ մաղթում Ձեզ, հնի ու նորի անկրկնելի հանդիպման և անդարձ բաժանման այս րոպեին: Մաղթում եմ Ձեզ երջանիկ գահկալություն, ծրագրերի իրագործման լուսաշող ապագա, արևշատ օրեր, և թող Ձեր առնական ուսերը երբեք չկքեն դժվարին ու հոգսաշատ լծի ծանրությունից:

Թույլ տվեք, ողջ ուսանողության ամուսնից, շնորհավորական խոսքս հղել մաև Ձեզ, հարազատ միաբաններ:

Եկամք այստեղ, այս հնամյա ու տառապանքով սրբացած հաս-տատությունից մերս, մոլոր էին մեր հայացքները՝ անշարժ ու լուսավոր կենտի բևեռեցիք, «քաղցեաք և ետուք մեզ ուտել, ծարաւեցաք և արբուցիք մեզ»:

Բյուր-բյուր շնորհակալություն Ձեզ և թող շնորհավոր լինի Ձեր Նոր տարին՝ առավոտյան նոր արևի, նոր ճառագայթների հետ Ձեր նորածին հույսերի իրականացումով:

Մեր շնորհավորական խոսքերն ունենք ուղղելու մաև Ձեզ, սիրելի դասախոսներ, որ անցնող տարում ևս, իբրև Ձեր արյուն-քրտինքի արգասիք, մեզ գիտության հսկա ծառից կենաց պտուղներ հրամցոյիք:

Շնորհավոր դասախոսներիդ և գիտության Ձեր աստծուն խնկարկողներիդ Նոր տարին՝ բազում-բազում աշխատանքային բեղմնավոր օրերով:

Վեհափառ Տեր, ևս մեկ անգամ թույլ տվեք շնորհավորելու Ձեր Նոր տարին ու Սուրբ Ծնունդը և խոսքս ավարտելու հոգեխինդ մաղթանքով.

«Լցո զպէտս կարեաց Հայաստանյայց Եկեղեցւոյ

Եւ շնորհագարդ պայծառացո զգաւազան

Իշխանութեան մերոյ հայրապետին,

Զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան. Ամէն»:

Ապա ներկաներին սևակյան ճոխ լեզվի ու մեծիմաստ մտքի պատգամ փոխանցեց հոգևոր ճեմարանի Զ լսարանի սան Գեղամ Մարտիրոսյանը՝ արտասանելով «Որդուս» բանաստեղծությունը:

Անշուշտ արդեն հասել էր հանդիսության ամենաեռուն ու հետաքրքիր պահը, երբ Զ լսարանցի Գարիկ Ահարոնյանն ընթերցեց ավանդական «կադնիչեք»-երը, որին հաջորդեց Կոմիտասի «Իմ չինարի յարը» զվարթ երգը:

Ապա, որքան էլ որ հավաքվածների համար անակնկալ էր, սեղանատան կենտրոնում հայտնվեց Կադանդ պապը, որը, մի շարք բարեմադրություններ անելով Վեհափառ Հայրապետին ու ներկացներին, ազդարարեց ավանդական վիճակահանության սկիզբը:

Վիճակահանությունից հետո երգչախումբը, Սամվել Խաչատրյանի մենակատարմամբ, կատարեց Մակար Եկմալյանի «Տեր կեցո դու գհայս» օրհներգը: Իսկ այնուհետև, սրահում տիրող լռության մեջ, իր օրհնության խոսքը ներկաներին ուղղեց Ազգիս Վեհափառ Գարեգին Ա Կաթողիկոսը:

«Միրելի միաբան եղբայրներ, դասախոսներ, սարկավագներ, սաներ: Ժիշտ ասվեց, որ այս բոլորի մեջ և այստեղ շուրջանակի գտնվողների մեջ ամենեն օտարը մարդկային տեսակետով ես եմ, որովհետև առաջին անգամն է, որ կգտնվեմ այսպիսի մթնոլորտի մեջ Մայր Հայրենիքի հողի վրա՝ Սուրբ Էջմիածնի այս հոգեվայրում: Եվ ես էլ մտորումներ կունենայի, թե արդյոք ինչպես պիտի անցնի այս երեկոն: Եվ ուրախ եմ ըսելու այսօր, փառք տալով Աստծուն, որ իսկապես ինձ համար հոգեղից պահ եղավ և երբեք ինձ օտար չզգացի: Մոտավորապես նույն բաները արվում են նաև ուրիշ վանքերում, ուրիշ գաղութներում: Արտաքին ձևերի մեջ կարող են լինել որոշ տարբերություններ, բայց ոգիի միությունը, ապրումների հարազատությունը և հաղորդակցությունը կմնա անփոփոխ: Այն բոլոր քանապետությունները, երգերը, խոսքերը, ուղերձները, որոնք մեզի բերին ազնիվ հոգիով լեցուն գաղափարներ, զգացումներ, այդ բոլորը ինձ համար սրտիս մոտիկ և սրտիս խոսող արտահայտություններ են: Այն բոլոր ազնիվ խոսքերին, որոնք անկեղծ սրտերից բխեցին, ես ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել ու գնահատանք ձեր բոլորի այս հավաքվածության, մեր Մայր Աթոռի մեծ ընտանիքի

ամբողջական պատկերի դրսևորումին համար, որ ես տեսնում եմ առաջին անգամ այսքան լայն տարողությամբ և հարազատությամբ՝ արտահայտված այս կամարների ներքո: Չեմ մոռանա այն երեկոն, երբ առաջին անգամ այստեղ ոտք դրեցի Ճրագալույցի գիշերը՝ Զատիկի տոնի նախընթաց երեկոյին: Եվ, անշուշտ, բոլոր մեր միաբանները ներկա չէին, յուրաքանչյուրն իր պաշտոնի վրա էր: Եվ այսօր ես կտեսնեմ մեր բոլոր առաջնորդներին, վաճառականներին, վաճառական միաբանների հետ միասին, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողության կարևոր մեկ տոկոսին: Եվ ես այսօր հատուկ կերպով ուրախ եմ, որ մեր մեջ է այսօր, իր սրտաբուխ փափագով, մեր նախկին դասախոսը հոգևոր ճեմարանի՝ պարոն Մելքոնյանը, որ այժմ ծառայում է որպես մեր պետության սպասավորը, որպես հավատարամատարը Հայաստանի Հանրապետության Լիբանանի նման մի երկրում, որտեղ արտասահմանի տարածքի վրա ամենից կարևոր գաղութը ունենք՝ մի շարք տեսակետներից դիտված: Ես նրան ճանաչել եմ, երբ նա այս սեղանների առջև էր նստում, արտասանում, երգում էր: Նա Հայ Եկեղեցու հոգին իր մեջ ապրող անձ է, և ուրախ եմ, որ այսօր մեզ հետ է գտնվում և ինչու չէ, այն երկրից է գալիս, որտեղ ես ապրել եմ իմ կյանքի ամենեն երկար ժամանակը, և մի տեսակ կամուրջ կլինի ու մեր այստեղի ապրումները կփոխանցի Կիլիկյան Աթոռի միաբաններին և ընդհանուր մեր լիբանանահայ ժողովրդին:

Այսօր չեմ ուզում երկար խոսել և ծանր ու լուրջ նյութերի անդրադառնալ, բայց մարդ ենք և հաճախ մտածում ենք, թե վաղը ինչ է լինելու՝ բաղդատած այսօրվան: Աստծու կամքով վաղը արթնանալու ենք և եթե փնտրենք ուրիշ տեսակի արև՝ չկա, եթե փնտրենք ուրիշ տեսակի մթնոլորտ և օդ՝ չկա, ուրիշ տեսակի ջուր՝ չկա, ուրիշ տեսակի հող՝ չկա: Ի՞նչ է ապա նորը, և ինչու՞ ենք մենք մեզ խաբում: Ես այսպես եմ ասում, որ ինչպես ֆրանսացի մի մեծ գրող ասել է՝ «Գետը ասում ենք, որ հոսում է, բայց մենք ենք, որ հոսք ենք և ոչ թե գետը՝ գետը իր տեղում է»: Մենք ենք նրան նայում և ասում, որ վազում է, որը բնության մեկնաբանությունն է մարդ էակի մեջ:

Մարդն է լծակը տիեզերքի, մարդն է պսակը տիեզերքի և մենք մեր մեջ նայելու կարիքն ունենք հաճախ: Եվ Նոր տարվան գիշերը այս արդա՛ր ուրախությունից հետո, նաև մեզ կտա մի պահ հանդարտորեն մտածելու, կեսգիշերին եկեղեցում՝ այստեղ, Մայր տաճարում և նաև մեր անձնական ապրումների ընթացքում: Ես մեկ պատգամ այս երեկո ունեմ ձեզ:

Այս երեկո ես մի բանի մասին էի մտածում: Այդ բոլոր խոսքերը եղան, ազնիվ խոսքեր եղան, տակավին կարող էին այստեղ վերապրեցնել բազմաթիվ ուրիշ գաղափարներ, ուրիշ ապրումներ, ուրիշ զգացումներ.

«Կաղանդի իրիկուն է, քառասուն զավակ՝ մեկ տան բոլորակի նստել են:

Վաղն առավոտ կուծն ուներնիդ ջրի գացնք,

Առտվան առաջին ջուրին նետ ոսկի է, որ կվազե,

Այս երեկո մեկզմեկու աչքերուն մէջ յուրաքանչյուրն իր դրախտը կտեսնե»:

Սիամանթոն է սա: Քիչ առաջ արտասանվեց Մուշեղ Իշխանից կտոր մը: Եվ այդ կտորը երբ գրել էր ինքը, Հայաստանը չէր տեսել: Եվ ի՛նչ ապրումով էր Հայաստանը ապրում իր մեջ, ի՛նչ խորումնկ հարազատությամբ: Իսկ ով էր փոխանցել այդ ապրումը իրեն: Դամասկոսի մեջ իր ապրած մանկությունից չէր եկել, Բեյրութ քաղաքի շենքերից չէր եկել և ոչ էլ մայրիների ծառերից, այլ այդ ապրումը եկած էր այս Մայր Աթոռի մեջ ձեզ նման, տղա՛քս, ձեզ նման նստած անձերից. Լևոն Շանթից, Նիկոլ Աղբալյանից: Եվ ես մտածում էի, թե որքան բախտավոր պետք է զգաք ձեզ, որ գտնվում եք մի այնպիսի միջավայրում, որտեղ պատմությունը կխոսի և ոչ թե իբրև պատմություն կխոսի, այլ իբրև շարահար և որպես անբեկանելի շղթա ճշմարտության՝ հայության կյանքի համար: Այստեղ մեկ պատգամս այս է. խոսքը, ճշմարտությունը եթե նույնիսկ խոսքից անդին սրտի մեջ անկեղծ է, բավարար չէ, պետք է, որ գործի մեջ թարգմանվի: Ըշմարտության փորձաքարը գործն է՝ արարքը: Եվ այդ երկուքին կամուրջը՝ խոսքը, զգացումը գործի վերածելու, այդ երկու ակունքները իրար

կապելու և երկուքին արժեքը ճշտելու ուժը, «կյանք» կոչված բառին մեջ է: Աստված տվել է մեզ այս կյանքը: Այսօր 1995 կըսենք, վաղը 96 կըսենք, բայց կյանքն է կարևորը՝ այն ապրելու բարիքը, որ Աստված տված է մեզի: Եվ այդ կյանքը պետք է ըլլա զգացումի՝ տեսական ճշմարտության և գործնական, շոշափելի, ժողովուրդին կյանք և երջանկություն տվող գործերուն միջև ոսկի կամուրջը: Եվ այդ պետք է լինի մեր այսօրվան մի տեսակ ուխտը և որոշումը:

Իմ սիրելի կրտսեր եղբայրներ, զավակներ ըսեմ ձեզի: Այսօր Մայր Աթոռի այս պատմական սեղանատան մեջ նստած մենք դժվար կրճանք պատկերացնել այն, ինչը որ իբրև ողբերգություն կկատարվի ողջ աշխարհի մեջ: Հաճախ ինձ պատահել է, որ ես գտնվեմ օտար երկիրներու մեջ և ստիպված եղած լինեմ իմ հայերեն լեզուն թողնելու և օտար լեզվով հայերին խոսելու: Երեկ չէ առաջի օր ակադեմիայեն 11 պատասխանատուներ իրենց նախագահի հետ միասին այցելեցին ինձ: Բնականորեն օրից, ջրից չէր, որ խոսեցինք, այլ խոսեցինք մեր ժողովուրդի մշակույթի ներկա տագնապից:

Այսօր արտասահմանում ձեզ և ինձ նման հայի անուն ունեցող, հայի արյուն կրող բազմաթիվ եղբայրներ և քույրեր այսպիսի հայերենով են արտահայտվում: Բայց ակադեմականների ինձ ասածը այն է, որ այսօր մեր Հայրենիքում հայերենը նահանջում է: Ա՛յս է ինձ համար ողբալին: Ես չեմ կարող նրանցից սպասել, որ նրանք ծնեն, մեծանան, օտար դպրոց երթան, օտար մշակույթով մեծանան և ինձ ու ձեզ նման հայերեն խոսին: Նրանց խոսածը իրենց պարտքի՝ ազգային պարտքի գնով է լինում. ճի՞գ են անում սովորելու համար: Իսկ այստեղ մենք, որ բնականորեն հայերեն լեզուն կսովորենք մեր ծնողներից, ընտանիքներից և դպրոցներից, այսօր մեր հայերեն լեզուն և հայկական արժեքները օրից օր նահանջում են:

Այս ինձ համար ամենից մեծ վտանգն է: Եթե մի խմոր կա՝ դա Հայաստանն է: Արտասահմանը այստեղ հայության կնայի, որպեսզի մաքուր հայություն ըմպե: Իսկ եթե երբեք մենք այսօր, ինչպես ես կտեսնեմ, նույնիսկ մեր Ազգային Ժողովի մեջ, նույնիսկ մեր մտավորական շրջանակներու մեջ հայերեն լեզուն որոշ մասամբ արդեն

օտարահնչուն է դարձել: Մենք պետք ունենք վերականգնելու, և դուք պիտի լինեք հոգևորական առաքյալները այդ գտության՝ եկեղեցական և ազգային գտության: Եթե աղանդավորներ կան կրոնական, աղանդավորներ կան նաև լեզվի առումով, որոնք օրից օր մաշեցնում են մեր լեզուն:

Այսօր թող լինի նորոգության ու վերագիտակցության օր: Հարազատ հայ լինենք, որովհետև այդ հարազատությունն է, որ հաղորդական ուժի պես պիտի ներթափանցվի մեր գաղութներում մեջ: Բայց երբ մենք՝ նոր սերունդը Հայաստանի, սկսի կապել Ամերիկան, սկսի կապել Եվրոպան իր արտաքին մակերեսային արժեքներին և երևույթներին մեջը, այն ատեն է, որ նահանջը կհասնի գագաթնակետի, սուրը կհասնի սրտին: Մինչև ճիմա սուրը դիպչում է մեր մորթին, ոսկորին, մսին, բայց ոչ տակավին սրտին: Սիրտը Հայաստանն է, Մայր Աթոռն է: Մենք պետք ունենք բյուրեղանալու և այդպիսի օտար ազդեցություններին ընթացք չտալու: Այս է դարմանը ամբողջ Հայաստանի մեր նոր Հանրապետության՝ անկախ Հանրապետության վերականգնումի իսկական փիլիսոփայությունը: Եթե մշակութային տեսակետով պիտի նահանջենք, աղարտվենք և գունաթափինք, այն ատեն ինչ կնշանակե անկախություն:

Անկախությունը միայն պետության անկախությունը չէ, այն նաև լեզվի ու մշակույթի անկախությունն է, առանց ուրանալու շփումը ուրիշ ազգերի, ուրիշ մշակույթների հետ, բայց ոչ թե ստրկային, այլ մեր սեփական նախընտրություններով: Եվ ես տեսնում եմ մեր երիտասարդության ամենեն մեծ վտանգը այդ երևույթից: Օտարամոլությունը իր այն տարածքին մեջ, որ օտարին բուն արժեքը չէ, որ կփոխանցվի մեզի, այլ օտարին փրփուրը, կեղտը և փոշին: Ատոր համար ինքնության գորացման և խորացման առիթ մը թող լինի 1996-ը:

Փառք կուտամ Աստուծո, որ սուգը վերցավ մեր Մայր Աթոռի վրայեն: Փառք կուտամ Աստուծո, որ մեր Հայրենիքը իր անկախ իրականությամբ այսօր մի նոր քայլ առաջ գնաց իր ազատ, անկախ պետականության կառուցման և զարգացման ապահովման, տնկու-

նացման ընթացքին մեջ: Փառք կուտամ Աստուծո, որ մեր երկիրը ունեցավ իր Ազգային ժողովը՝ ընտրված իր ժողովուրդեն: Փառք կուտամ Աստուծո, որ մեր պետությունը ունեցավ իր սահմանադրությունը՝ մենք դարձանք պետականորեն կազմակամ, առավել ևս շեշտված պետականություն, և տակավին փառք կուտամ Աստուծո, որ մեր Եկեղեցվո մեջ միասնական գործունեության ոգին կշեշտվի օրեօր, և 1700-ամյակը կդառնա մեզ համար համազանգիչ, համադրիչ մեկ ուժ, որպեսզի ամբողջականությունը իր գործության մեջ ի հայտ գա մեր ժողովուրդին և ամբողջ աշխարհին համար:

Եվ կվերջացնեմ իմ խոսքս առաքյալի բառերով, որը գրեցեք ձեզ մոտ իբրև այսօրվա նոթատետրի վերնագիր՝ «Գնեսցուք զժամանակն»: Ինչպե՞ս կգնես՝ դրամով չի գնվիր, այլ կյանքով կգնվի: Եվ այս, որ ժամանակը չէ, որ մեզի գա, այլ մենք երթանք ժամանակին և կարենանք ըսել, թե մենք գնած ենք քեզ, իրավունք չունիս երթալու, մերն ես դու մեր գործերով, մերն ես դու մեր իրագործումներով: Եվ երբ մենք մեր կնիքը դնենք ժամանակին վրա, ժամանակը չի անցնի, իսկ ժամանակը իր կնիքը դնի մեզ վրա, մենք ալ կերթանք և կարծեք երբեք եղած չլլայինք:

Թող Աստված օրհնե մեր միաբանությունը, իր այս ամբողջական կազմով, մեր հոգևոր ճեմարանի բոլոր սաները: Եվ գնահատանքս կհայտնեմ այն բոլոր անձներուն, որոնք այս երեկոն պատրաստեցին՝ Հայր Կարապետին, պարոն Շարբաթյանին և բոլոր այն անձներուն, ովքեր դեր ունեցան և ուրիշներ, համեմայնդեպս, դո՛ւք, երեխաներ, ժառանգավոր սաներ, դուք, որ այս երեկոն մեզ այսպես գեղեցիկ ընծայեցիք՝ հառաջդիմեցեք: Այստեղ նստողը վաղը այստեղից դուրս պիտի գա, և պիտի ասեն՝ այսինչ միաբան իր գրքերով, իր գործերով, իր բարիքներով:

Թող այս ըլլա Նոր տարվան պատգամը և իմ ողջույններս մեր բոլոր թեմական իշխանություններուն, մեր բոլոր ժողովուրդին և «Վաղն առավոտ ջրի գացեք, աղբյուրներեն ոսկի է, որ կհոսի»:

Սամվել Խաչատրյան

Զ լսարանի սան